ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 27 սեպտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Գևորգյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին

մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի մայիսի 19-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև 2000 թվականի հուլիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը ՀՀ սահմանադրական դատարան՝ մուտքագրված 11.08.2016թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև 2000 թվականի հուլիսի 19-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրությունն (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2016թ. մայիսի 19-ին՝ նշված համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մի շարք հոդվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ համաձայնագիրը ստորագրվել է 2000 թվականի հուլիսի 19-ին և գործում է 2002 թվականի հունվարի 1-ից: Մինչդեռ 2000 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության հարկային համակարգում տեղի են ունեցել փոփոխություններ, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանայել նշված Համաձայնագրով ամրագրված որոշակի դրույթներ: Միաժամանակ, Արձանագրությամբ Համաձայնագրի դրույթները համապատասխանեցվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից մշակված հարկային կոնվենցիայի 2010 թվականի մոդելային տարբերակին, որը կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրերի կնքման ժամանակ հանդիսանում է որպես հիմնական տիպային մոդել:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագիրը կիրառել իրավաբանական անձանց շահութահարկի, ֆիզիկական անձանց եկամտահարկի և գույքահարկի նկատմամբ,
- չհարկել բելառուսական կողմի ռեզիդենտ հանդիսացող կամ անմիջապես մինչև ՀՀ ժամանելը բելառուսական կողմի ռեզիդենտ հանդիսացած և իրար հաջորդող երկու տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում գտնվող Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որպես կրթական հաստատություն հավատարմագրված ցանկացած համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ այլ կրթական հաստատության հրավերով և Հայաստանի Հանրապետությունում այդ կրթական հաստատությունում բացառապես դասավանդման և (կամ) գիտական աշխատանք կատարելու նպատակով գտնվող պրոֆեսորին, մանկավարժին կամ հետազոտողին՝ Հայաստանի Հանրապետությունում այդպիսի դասավանդման կամ գիտական աշխատանքի իրականացման համար վարձատրության առնչությամբ,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Բելառուսի Հանրապետության իրավասու մարմինների հետ փոխանակեն տեղեկություններ Համաձայնագրի դրույթների կատարման կամ ՀՀ և Բելառուսի Հանրապետության կամ նրանց իշխանության տեղական մարմինների անունից գանձվող ցանկացած տեսակի և բնույթի հարկին առնչվող՝ ազգային օրենսդրությունների կիրառման կամ հարկադիր կատարման վերաբերյալ՝ այն չափով, որքանով հարկումը չի հակասում Համաձայնագրի դրույթներին և այլն:

4. 2016 թվականի մայիսի 19-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև 2000 թվականի հուլիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2016 թվականի մայիսի 19-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև 2000 թվականի հուլիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ

կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

27 սեպտեմբերի 2016 թվականի
ՍԴՈ-1305